ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1961 Общественные науки

Հ. Ա. Բուռնազյան

ԼԵՆԻՆՅԱՆ „ԻՍԿՐԱ"-Ն ԵՎ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1900—1903 թթ.)

19-րդ դարի վերջին ռուսական սոցիալ-դեմոկրատների շրջանում գոյություն ունեցող գաղափարական տարաձայնությունների և կազմակերպական անջատվածության պայմաններում չափազանց դժվար էր ստեղծել բանվոր դասակարգի միասնական մարքսիստական պարտիա։ Վ. Ի. Լենինը միասնական պարտիայի ստեղծման համար առաջին գործնական քայլը համարում էր համառուսական քաղաքական լրագրի ստեղծումը։ Լրագիրը, նրա կարծիքով, պետք է լինի այն թելը, որը որմնադիրին ցույց է տալիս, թե շենք կառուցելիս որտեղ պետք է շարել քարերը։ «Մեզանում կան և՛ քարեր, և՛ որմնադիրներ, իսկ բացակայում է հենց բոլորի համար տեսանելի թելը, որը կարողանար բոլորի համար ուղեցույց լինել»[1]։

Միայն այդպիսի քաղաքական լրագիրն էր ի վիճակի սոցիալ-դեմոկրատական խմբակները շեղել տեղական նեղ շահերից և նրանց ներգրավել ընդհանուր պարտիական և ընդհանուր դասակարգային խնդիրների համար մղվող պայքարի մեջ։ Այդպիսի լրագիրը, նշում էր Լենինը, կդառնա ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ և ագիտատոր, այլև կոլեկտիվ կազմակերպիչ։ Դա կլինի այն գլխավոր օղակը, որից բռնելով միայն հնարավոր կլինի հասնել ցանկալի նպատակին՝ ստեղծել միասնական ու ամրակուռ պարտիա։

Այդպիսի թերթ հանդիսացավ Լենինի ստեղծած «Իսկրա»-ն, որը կարճ ժամանակամիջոցում այնքա՜ն շատ բան արեց մասսաների քաղաքական դաստիարակության համար։

«Իսկրա»-ն անողոք պայքար ծավալեց մարքսիզմի ամեն գույնի ու երանգի թշնամիների դեմ և հաղթանակով դուրս եկավ այդ պատվավոր պայքարից։ «Իսկրա»-ն Լենինի ղեկավարությամբ դարձավ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի մարտական օրգանը։ Նա արթնացնում էր մասսաների ռևոլյուցիոն գիտակցությունը, պրոլետարիատին պայքարի հանում, բանվորական շարժումը միացնում գիտական սոցիալիզմին, զարգացնում մարքսիստական թեորիան, մշակում ռևոլյուցիոն տակտիկա և դրանցով զինում բանվոր դասակարգին։ «Իսկրա»-ի ձայնը հասնում էր Ռուսաստանի բոլոր անկյունները և շահագործվող դասակարգերին կոչ էր անում՝ համախմբվել մարքսիզմի դրոշի ներքո։ Ինչպես գրել է Լենինը՝ «...«Իսկրա»-ն դարձավ պարտիա և պարտիան դարձավ «Իսկրա»...»[2]։

Սակայն մեր նպատակը չէ այս հոդվածում շարադրել «Իսկրա»-ի դերը

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 189։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 178։

և նրա գործունեությունը ընդհանրապես։ Մենք այստեղ կաշխատենք համառոտ կերպով ցույց տալ, թե համառուսական քաղաքական մարքսիստական այդ առաջին անլեգալ թերթը ինչպիսի անգնահատելի գեր խաղաց Հայաստանի աշխատավոր մասսաների քաղաքական դաստիարակության և նրանց ռևոլյուցիոն շարժումների կազմակերպման ու ծավալման գործում։

* * *

Անցյալ դարի վերջին քառորդում կապիտալիզմը սկսում է արագորեն զարգանալ նաև Անդրկովկասում։ Արդյունաբերության զարգացման, տնտեսական և առևտրական կապերի ընդլայնման հետեանքով ռուսական արդյունաբերական ապրանքները ողողում են Անդրկովկասը և դուրս մղում տնայնագործական արտադրության ապրանքները։

«Այսպիսով ռուսական կապիտալիզմը,— գրում է Վ. Ի. Լենինը,— Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»[3]։

Կապիտալիստական արդյունաբերության որոշ ճյուղեր առաջացան նաև Հայաստանում։

Ստ. Շահումյանը այդ մասին գրում է.

«Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների ընթացքում, մուտք գործեց և մեր երկիրը և դրեց իր ուժեղ և ուրույն դրոշմը հայկական իրականության վրա»։

Կապիտալիստական արդյունաբերության հիմնական ճյուղերը Հայաստանում հանդիսանում էին պղնձի և սպիրտի (գինի, կոնյակ) արդյունաբերությունը։ Բանվոր դասակարգի ձևավորման համար հատկապես կարևոր նշանակություն ունեցավ Ալավերդում, Շամլուղում և Ղափանում պղնձի արդյունաբերության ընդլայնումը։

Հայաստանի և՛ բանվորների, և՛ գյուղացիների դրությունը ծայր աստիճան անտանելի էր։ Նրանք զուրկ էին քաղաքական ամենն տեսակ իրավունքներից։ Ձեռնարկատերերը ամեն մի հասարակ բանի համար տուգանում էին բանվորներին և պահում նրանց աշխատավարձից։ Հատկապես անտանելի էին բանվորների կենցաղային պայմանները. նրանք ապրում էին կեղտոտ, խոնավ և մութ նկուղներում, ընդհանուր սրահներում։

Անդրկովկասի բանվորների և գյուղացիների ծանր վիճակի մասին «Իսկրա»-ն տպագրել է բազմաթիվ թղթակցություններ ու նամակներ։

Վ. Ի. Լենինը չափազանց մեծ նշանակություն էր տալիս բանվորական թղթակցություններին ու նամակներին և չէր դադարում հիշեցնել «Իսկրա»-ի գործակալներին, որ նրանք լայնացնեն իրենց կապերը բանվորների հետ և որքան հնարավոր է ավելի շատ բանվոր ու գյուղացի թղթակիցներ համախմբեն լրագրի շուրջը։ Վ. Ի. Լենինը խմբագրությունում ստացվող բոլոր նամակներն անձամբ կարդում էր, պատասխաններ դրում, խորհրդակցում թղթակիցների

[3] Վ. Ի. Լենին, հատ. 3, էջ 771։

[4] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 79։

հետ, խորհուրդներ տալիս նրանց. «...Հաղորդեցե՛ք... բանվորներին — գրում է Վ. Ի. Լենինը,— և հայտնեցե՛ք նրանց մեր խնդրանքը, որ նրանք ինքներն էլ գրեն մեզ ՈՉ ՄԻԱՅՆ մամուլի համար, այլ հենց այնպես, մտքերի փոխանակության համար, որպեսզի չկորցնենք մեր միջև եղած կապն ու փոխադարձ ըմբռնումը»։

Բանվորներն այլևս չեն ուզում հաշտվել իրենց իրավազուրկ և տնտեսական ծանր վիճակի հետ, նրանք բողոքի ցույցեր են սարքում, պահանջներ ներկայացնում գործարանատերերին։ Ահա «Իսկրա»-ի № 16-ը։ Նրանում տպագրված բանվոր-թղթակցի նամակը պարզ ու անպաճույճ լեզվով պատմում է ծանր վիճակի մեջ աշխատող ու ապրող բանվորների դրության մասին։ Հեղինակն այդ նամակն ավարտում է իր ընկերներին ուղղված հետևյալ խոսքերով.

«Մեր կյանքը զուրկ է որևէ ուրախությունից, այն միայն ճանապարհ է դեպի գերեզման։ Լավ չէ՞ ուրեմն մեռնել ոչ թե հաստոցների առաջ որպես ճորտեր, այլ մեռնել պայքարելով ազատության լավ ապագայի համար...»։ «Իսկրա»-ն բանվոր դասակարգին դաստիարակում էր ինտերնացիոնալիզմի, ապագա ռևոլյուցիայի մեջ ունենալիք իր հեգեմոն դերի ըմբռնման ոգով։ Անդրկովկասում ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի, պարսիկ, թաթար և ուրիշ ազգերի բանվորները կողք-կողքի և ուս-ուսի դուրս էին գալիս հակացարական բացահայտ ելույթների, որոնց դեմ կառավարությունը շատ հաճախ ստիպված էր լինում դիմել զորքի միջամտությանը։ «Իսկրա»-ն նշում էր, որ բանվորների գիտակցության աճին ու զարգացմանը մեծ չափով նպաստում են բանվորական ժողովները, զրույցները բանվորական հարցի մասին և բրոշյուրների տարածումը ռուս, վրացի և հայ բանվորների մեջ։

Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման, մարքսիզմի տարածման և ռևոլյուցիոն շարժումների ծավալման վրա Լենինյան «Պայքարի միության» և «Իսկրա»-ի թողած ազդեցությունը պայծառ էջ է բոլշևիզմի հերոսական տարեգրության մեջ։ Պետերբուրգի «Միությանն» մեջ մտնում էին նաև հայ ուսանողներ, որոնք անցնելով Լենինյան դաստիարակության դպրոցը, հետագայում աշխատեցին իրենց հայրենիքում և տարածեցին Ռուսաստանի պրոլետարիատի ռևոլյուցիոն հարուստ փորձը։ Անդրկովկասի աշխատավորության քաղաքական ինքնագիտակցության բարձրացման գործում քիչ դեր չխաղացին Կովկաս աքսորված ռուս բանվորներն ու ռևոլյուցիոներները (Ֆ. Աֆանասև, Գ. Ֆրանչեսկի, Ի. Լուզին, Ի. Կոզարենկո, Լ. Կրասին, Ս. Ալիլուև, Վ. Կուռնատովսկի, Մ. Կալինին և ուրիշներ)։

Այդ շրջանում Անդրկովկասում գործում էին բազմաթիվ մարքսիստական խմբակներ։ Նրանցում ընդգրկված հայ, ռուս, վրացի, ադրբեջանցի, թաթար և այլ ազգերի շատ բանվորներ հոգևոր ստրկությունից փրկության ուղի էին որոնում։ Նրանց այլևս չէր բավարարում լեգալ մամուլը։ Մարդիկ ծարավ էին անլեգալ մամուլի, գրականության, որի էջերում ամբողջ ձայնով հնարավոր լիներ խոսել իրերի իսկական դրության և պրոլետարիատի խնդիրների մասին։ «Ներկա պայմաններում,— գրել է Ստ. Շահումյանը,—անհնարին է որևէ

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 103։

առաջադիմական հասարակական գործ կատարել խաղաղ, օրինական ճանապարհով, լեգալ գրականության միջոցով»[6]:

Ահա թե ինչու «Իսկրա»-ն երևան գալուն պես, այնպիսի մեծ ընդունելություն գտավ Հայաստանում։ Աշխատավորությունը ագահորեն կարդում էր «Իսկրա»-ն և այնտեղ գտնում էր իրեն հուզող հարցերի պատասխանները։ Լենինյան «Իսկրա»-ն բարձրացնում էր պրոլետարիատի ինքնագիտակցությունը, ցույց տալիս նրանց իրավունքները, թշվառ վիճակը և այդ վիճակից դուրս գալու միակ ճշմարիտ ուղին։ Թերթի յուրաքանչյուր համար նոր լիցք ու թափ էր հաղորդում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարին։ Լենինյան «Իսկրա»-ի ռևոլյուցիոնացնող ներգործության տակ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատների աշխատանքը գնալով ավելի լայն թափ է ընդունում։ «Իսկրա»-ն 1901 թ. նոյեմբերի 20-ի № 11-ում գոհունակությամբ նշում է նրանց ագիտացիոն լայն աշխատանքը. «Հունվարից մինչև հոկտեմբեր (խոսքը 1901 թվականի մասին է,—Հ. Բ.), Կոմիտեն հրատարակել է 16 պրոկլամացիա՝ 19.800 օրինակով։ Բոլոր հրատարակությունները տպագիր են։ Հիանալի գրված այդ պրոկլամացիաները, որ լույս էին տեսնում ռուսերեն, հայերեն, վրացերեն լեզուներով, կարդում էին ոչ միայն Թիֆլիսի և Բաքվի հայ պրոլետարները. դրանք հասնում էին նաև Հայաստան և տարածվում նույնիսկ հեռավոր գյուղերը՝ մինչև Մալիշկա։ «Իսկրա»-ի կայծերը տարածվում էին ամբողջ Հայաստանով մեկ և լուսավորում նույնիսկ ամենախուլ անկյունները

Թիֆլիսում, Բաքվում, Բաթումիում և Անդրկովկասի շատ քաղաքներում ու գյուղերում տեղի ունեցող ռևոլյուցիոն ելույթներին, մարքսիստական խմբակներին ու սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին գործուն մասնակցություն էին ունենում նաև հայ բանվորները։

1902 թվականի փետրվարի 4-ին Բաթումիի ժանդարմական վարչության պետը Քութաիսիի զինվորական նահանգապետին ներկայացրած զեկուցագրում հայտնում է, որ Մանթաշևի գործարանի 82 գործադուլավորներից ամենաակտիվները 30 հայեր էին, որոնցից 22-ն արդեն բանտարկված են, իսկ 8-ը գրտնվելուն պես նույնպես կբանտարկվեն և ...քանի որ հիշյալ հայերը գործադուլի մեջ կազմում են ամենավտանգավոր տարրերը... խնդրում եմ Ձերդ գերազանցությանը՝ միջնորդություն հարուցել շտապ կարգով նրանց բնակեցնելու որքան հնարավոր է երկրի հեռավոր վայրերում, առավելապես Հյուսիսային Կովկասում, նրանց այնտեղ ոստիկանական հսկողության տակ հանձնելու որպես ոչ բարի դիտավորություններ ունեցող և հասարակական կարգի համար վտանգավոր մարդկանց. գործարանային քաղաքում, ինչպիսին Բաթումին է, ապրելու իրավունք չունեցողների»[7]։

Լենինյան «Իսկրա»-ի գոյության շրջանում, 1900—1903 թվականներին, Հայաստանում ստեղծվում են մի շարք մարքսիստական խմբակներ (Ալավերդում, Հաղպատում, Սանահին, Ալավերդի, Ուլուխանլու, Ալեքսանդրապոլ կայարաններում, Երևանում՝ Հայաստանում գտնվող զորամասերում, Շուստովի գինու գործարանում և այլ վայրերում)։ 1902 թվականին սոցիալ-դեմոկրա-

[6] Ա. Շահումյան. Ընտիր երկեր, 1948, էջ 16։

[7] ՍՄԿԿ կենտ-կոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրաց. ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 24, թ. 181

տական խմբակ է ստեղծվում Ալեքսանդրապոլի կայազորում։ Մինչև 1904 թվականը նույնպիսի խմբակներ են ստեղծվում Կարսում, Ղափանի հանքերում, Նոր Բայազետում։

Հայաստանում ավելի ու ավելի է մեծանում հետաքրքրությունը դեպի մարքսիստական գրականությունը, դեպի ռևոլյուցիոն թերթերն ու պրոկլամացիաները, դեպի ընդհատակյա աղատ, ճշմարտախոս մամուլը։

«Իսկրա»-ն, իսկրայական հրատարակությունները, Վ. Ի. Լենինի աշխատությունները, մարքսիստական անլեգալ գրականությունն ու մամուլը Հայաստանի աշխատավորական մասսաների համար դառնում են հացի ու ջրի նման անհրաժեշտ ու կենսական։

Հայաստանում մարքսիզմի տարածումը և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության ծավալումը պայմանավորված էր Լենինյան «Իսկրա»-ի երևան գալով։

Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների զարգացման համար մեծ դեր խաղաց 1902 թ. Թիֆլիսում Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի ղեկավարությամբ հիմնված «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որին Թիֆլիսի կոմիտեի հետ հաջողվում է հիմնել մի տպարան և նույն թվականի հոկտեմբերին հրատարակել անլեգալ «Պրոլետարիատ» թերթը։

«Պրոլետարիատ»-ը «Իսկրա»-ի ծնունդն էր, նրա գաղափարների տարածողը հայերեն լեզվով, լենինյան-իսկրայական ուղղության հայերեն առաջին թերթը։ Հատկանշական է, որ թերթի ճակատին գրված էր «Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիա», իսկ «Պրոլետարիատ»-ի վերջին էջում իրրև խմբագրության հասցե ցույց էր տրված «Իսկրա»-ի խմբագրության հասցեն։ «Իսկրա»-ի օրինակով «Պրոլետարիատ»-ը պայքարում էր «էկոնոմիստների», օպորտունիստների, բուրժուական նացիոնալիստների դեմ, պաշտպանում էր պարտիայի կազմակերպական լենինյան սկզբունքները, մեծ նշանակություն տալիս մարքսիստական տեսության հարցերին, «Պրոլետարիատ»-ը մերկացնում էր դաշնակների և հնչակների ստոր գործելակերպը, նրանց սև ու մութ ծրագրերը։ «Պրոլետարիատ»-ի այսպիսի մարտական ոգին ուշուշտ պետք է բացատրել նաև նրանով, որ թերթն ստեղծողները կապ ունեին Վ. Ի. Լենինի և «Իսկրա»-ի խմբագրության հետ։

Այդ թերթի առաջին համարում իրրև առաջնորդող տպագրված էր «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը», որը սոցիալիստական իդեալի իրականացումը հնարավոր է համարում «միայն գոյություն ունեցող ամբողջ կարգի արմատական հեղաբեկման միջոցով, սոցիալական ռևոլյուցիայի միջոցով, որի անհրաժեշտ նախերգանքը պետք է ծառայի պրոլետարիատի քաղաքական դիկտատուրան»*։

Վ. Ի. Լենինը «Պրոլետարիատ»-ն ստացավ Լոնդոնում, 1903 թվականի հունվարին և ծանոթանալով թերթի բովանդակությանը, «Իսկրա»-ի № 33-ում հանդես եկավ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի մասին» ծավալուն հոդվածով, որը Լենինի մինչև այժմ հայտնի առաջին գրավոր ելույթն է հայ մարքսիստների գործունեության մասին։

«Մենք ամբողջ հոգով ողջունում ենք,— գրում է Վ. Ի. Լենինը — «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը և մանավանդ ազգային

* Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 409։

հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը։ Մանիֆեստի վերաբերյալ անելով որոշ դիտողություններ Վ. Ի. Լենինը հոդվածն ավարտում է «մի անգամ ևս ողջունելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի նոր անդամին՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությանը»։

Պարտիայի առաջնորդի այս բարձր գնահատականը ոգևորում և նոր եռանդ է տալիս հայ սոցիալ-դեմոկրատներին։ Ռևոլյուցիոն շարժումը Հայաստանում գնալով նոր, ավելի լայն մասսաներ է ներգրավում։ Բարձրացող ալիքը շարժման մեջ է դնում նաև գյուղացիությանը։

Այդ շրջանում խոշոր գործադուլներ տեղի ունեցան Շամլուղի պղնձահանքերում։ 1903 թվականի գարնանն ու աշնանը մի շարք գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Լոռիում և Հայաստանի այլ գյուղերում։ Դժգոհությունը, հուզումները ու ռևոլյուցիոն տրամադրությունը այստեղ ավելի հեշտ էին ընդգրկում մասսաներին, որովհետև այս հետամնաց ծայրամասում նրանք, սոցիալական ճնշման հետ միասին, ենթարկվում էին նաև ազգային ճնշման ու հալածանքի։

Բանվորական աճող շարժումը ավելի հաջող գլխավորելու համար կենսական պահանջ դարձավ միավորվելը և մարզային ղեկավար կենտրոն ունենալը։ Այդ նպատակով 1903 թվականի մարտին Թիֆլիսում անլեգալ կերպով հրավիրվեց ՌՍԴԲՊ Անդրկովկասյան կազմակերպությունների առաջին համագումարը, որը միաձայն ընդունեց «Իսկրա»-ի բաղաքական գիծը։

Համագումարի որոշումը՝ ՌՍԴԲՊ Կովկասյան Միություն կազմելու մասին, ունեցավ խոշոր նշանակություն։ Այն հնարավորություն տվեց Անդրկովկասում գործող անջատ-անջատ սոցիալ-դեմոկրատական կոմիտեներն ու խմբակները միավորել և համախմբել լենինյան «Իսկրա»-ի գիծը պաշտպանող միասնական պարտիական ղեկավար կենտրոնի շուրջը։ Համագումարը Կովկասյան Միությունը հռչակեց ՌՍԴԲՊ-ի մի անբաժան ճյուղը, հավանություն տվեց «Իսկրա»-ի մշակած ու հրատարակած ՌՍԴԲՊ ծրագրի նախագծին և «Իսկրա»-ն հայտարարեց որպես պարտիայի ղեկավար օրգան։ Համագումարը ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի պատգամավորներ ընտրեց Բ. Կնունյանցին, Դ. Տոփորիձեին, Ա. Ջուրաբյանին և նրանց պատվիրեց երկրորդ համագումարում պաշտպանել «Իսկրա»-ի ծրագրային, կազմակերպական ու տակտիկական գիծը։

Համագումարը որոշեց ունենալ ՌՍԴԲՊ Կովկասյան Միության տպագիր օրգան։ Այդ նպատակով վրացական «Բրձոլա»-ն և հայկական «Պրոլետարիատ»-ը միավորվեցին և ստեղծվեց վրացերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսնող «Պրոլետարիատի կոչը», «Պրոլետարիատիս բրձոլա» և «Բորբա պրոլետարիատա» թերթերը։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության Կոմիտեի կազմակերպումը խոշոր նշանակություն ունեցավ՝ Անդրկովկասի՝ այդ թվում նաև Հայաստանի բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության քաղաքական պայքարի կազմակերպման գործում։ Կոմիտեն հենց սկզբից հաստատ կերպով կանգնեց լենինյան «Իսկրա»-ի դիրքերի վրա, դարձավ նրա հուսալի հենարաններից մեկը և իրեն հայտարարեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիայի անբաժանելի մասը։

«Իսկրա»-ն անդրադառնալով Կովկասյան Միության ինտերնացիոնալ բնույթին, գրել է. «Կովկասյան ընկերները ուսսսայական (ազգային) կազմա-

կերպությունների վճռական հակառակորդներ են և իր ծագման օրվանից կոմիտեներից յուրաքանչյուրն աշխատում էր բոլոր լեզուներով և ներկայացնում էր ամբողջ քաղաքի բանվորներին, առանց ազգային խտրության...»[9]։

Լենինյան «Իսկրա»-ն բազմիցս անդրադարձել է Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի սոցիալ-դեմոկրատական շարժման խնտերնացիոնալ բնույթին, որը զարգանում էր բուրժուա-նացիոնալիստական ուղղությունների դեմ մղվող անհաշտ պայքարում։ Մերկացնելով բոլոր գույնի բուրժուական նացիոնալիստներին, որոնք ամեն կերպ աշխատում էին կտրել հայ, վրացի, ադրբեջանցի բանվորներին ռուս պրոլետարիատից, ռևոլյուցիոն մարքսիստական պարտիայից և նրանց պայքարին սալ զուտ ազգային բնույթ, Բ. Կնունյանցը «Իսկրա»-ի № 51-ում գրել է. «Ռուսը տարածում և փակցնում էր հայկական և վրացական պրոկլամացիաներ, հայ բանվորն ագիտացիա էր մղում թաթարների մեջ, վրացի գրաշարը տպագրում էր ռուսական թռուցիկներ, և նրանք բոլորը միասին, համատեղ, մշակում էին ցույցերի, գործադուլների, կազմակերպական ժողովների գործունեությունների պլանը»։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության լայն գործունեության շնորհիվ Անդրկովկասի բանվորների պայքարն ավելի նպատակասլաց է դառնում։ «Իսկրա»-ն հայտնում է, որ Կովկասյան Միությունը տարբեր լեզուներով մի շարք թռուցիկներ, կոչեր ու պրոկլամացիաներ է հրատարակել»[10]։

«Իսկրա»-ն ուշի-ուշով հետևում և ուղղություն էր տալիս հայ ժողովրդի հակացարական պայքարին։ 1903 թվականի հունիսի 12-ին Նիկոլայ 2-րդ ցարը հաստատում է հայկական եկեղեցական ունեցվածքը կառավարության տնօրինությանը հանձնելու մասին թալանչիական օրենքը։ Այդ առթիվ Բ. Կնունյանցը «Իսկրա»-ում «Կավկազեց» ստորագրությամբ հանդես է գալիս «Նոր կողոպուտ» վերնագրով մի ընդարձակ հոդվածով, որտեղ մանրամասն վեր է լուծում այդ օրենքի էությունը։ «Իսկրա»-ն ժողովրդին բացատրում էր, որ այդ օրենքը կոպիտ ոտնձգություն է ազգային կյանքի ինքնուրույնության նույնիսկ ամենավերջին մնացորդների դեմ։

Թերթը պատմում է, որ Հայաստանի ժողովրդական մասսաները, փոքրից մինչև մեծը, մեկ մարդու նման ոտքի ելան հակահարված տալու հայ ժողովրդի ազգային իրավունքների դեմ ցարական կառավարության այդ նոր հարձակմանը։ Անդրկովկասի տարբեր ազգությունների աշխատավորները լիակատար համերաշխությամբ ամեն կերպ աջակցում էին հայ ժողովրդին՝ նրա արդարացի պայքարում։ «Իսկրա»-ն արձանագրեց, որ «Անդրկովկասը ռևոլյուցիոն փոթորկի մեջ է»։ Մարքսիստական դիրքերից վերլուծելով ստեղծված իրադրությունը, Բ. Կնունյանցը «Իսկրա»-ում գրում է.

«Բայց սխալ կլիներ կարծել, որ միայն այդ օրենքը ի վիճակի կլիներ նման փոթորիկ առաջացնել։ Խաղաղ կուլտուրական ձեռնարկությունների սիստեմատիկ հետապնդումները, տխրահռչակ «ռուսիֆիկացման քաղաքականությունը», 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը, բարեգործական հիմնարկների գործունեության սահմանափակումը, հրատարակչական ընկերության փակումը և մի ամբողջ շարք նման միջոցառումներ կամաց-կամաց

---

[9] «Իսկրա», № 50, 1903։

[10] Տե՛ս «Իսկրա», №№ 40, 41, 47, 49։

առաջ բերեցին սուր հակամարտություն հայկական ազգարնակչության և կառավարության միջև, որը վաղ թե ուշ պետք է պայթեր։ Բայց վերջին միջոցը, ինչպես և նախորդները, կարող էր մնալ առանց բացահայտ ռևոլյուցիոն բողոքի, եթե չլիներ բանվորական մասսաների հերոսական պայքարը Կովկասի արդյունաբերական կենտրոններում, որը ցույց տվեց ամբողջ երկրին, որ ինքնակալության դեմ պետք է և կարելի է պայքարել... Ահա թե ինչու հայ ժողովուրդը, այժմ սուր կերպով բողոքեց թագակիր ավազակի նոր բարբարոսության դեմ և սկսեց ղենքը ձեռքին պաշտպանել իր իրավունքները»[11]։

Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում, Ջալալոգլիում, Ղարաքիլիսայում, Թիֆլիսում, Ելիզավետպոլում, Բաքվում, Շուշիում ծավալված հակացարական վիթխարի միտինգներն ու ցույցերը շատ հաճախ վեր էին ածվում զինված ելույթների և զորքի հետ արյունալի ընդհարումների։ «Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի մարտական տրամադրություն է տիրում Կովկասի հայ բնակչության մեջ»,— գրում է լենինյան «Իսկրա»-ն։ Այնուհետև թերթը նշում է, որ հուզումները կանխելու համար զորքի հետ Շուշի է ուղարկվել նաև հրետանի, Թիֆլիսում՝ գնդացիրներ, իսկ Բաքվում՝ կասպիական նավատորմը մոտեցել է ափին։ «Ահա ձեզ ինքնակալության «ուժն» ու «հզորությունը»,— զավեշտով գրում է «Իսկրա»-ն — ժողովրդական դժգոհության առաջին իսկ լուրջ զինված պայթյունի ժամանակ նա բոլորովին կորցրեց գլուխը»։

«Իսկրա»-ն ցույց է տալիս այնուհետև, թե ինչպես նացիոնալիստական տարրերը խոսում էին միայն ազգային ինքնապաշտպանության մասին, առաջարկում սև դրոշակ բարձրացնել և սուգ պահել։ «Մեր ընկերները խիստ կերպով հանդես եկան նման պասսիվ բողոքի դեմ, նշելով, որ ոչ թե պետք է պաշտպանվել, այլ՝ հարձակվել, ոչ թե լաց լինել, այլ պայքարել, հանդես գալ ոչ թե սև սգադրոշով, այլ՝ կարմիր ռևոլյուցիոն դրոշով»—գրում է Բ. Կնունյանցը «Իսկրա»-ի № 49-ում։

Հայ սոցիալ-դեմոկրատները ակտիվորեն մասնակցում էին ցարիզմի դեմ ուղղված այդ ելույթներին և աշխատում էին ճիշտ ուղղություն տալ դրանց։ Նրանք հայ ժողովրդին հեռու էին պահում նացիոնալիստների ու կղերականների այն փորձերից, որոնք ճգնում էին շարժմանը տալ հակառուսական նացիոնալիստական բնույթ։ Լենինյան «Իսկրա»-ն այդ առթիվ նշելով հայ ընկերների ճիշտ դիրքորոշումը, գրում է. «Հաճույքով նշում ենք, որ Կովկասի մեր ընկերները բոլորովին ճիշտ գնահատեցին հայկական եկեղեցական ունեցվածքի վրա ցարական արշավանքի քաղաքական նշանակությունը և իրենց օրինակով ցույց տվեցին, թե ինչպես պետք է ընդհանրապես սոցիալ-դեմոկրատիան վերաբերվի ամեն մի նման երևույթի»։

1903 թվականի բանվորների գարնանային և ամառային վիթխարի գործադուլները, գյուղացիական ելույթները և ժողովրդական ռևոլյուցիոն շարժումները ցույց են տալիս, որ Հայաստանը նույնպես թևակոխել է քաղաքական պայքարի նոր, բարձրագույն փուլը։ Այս բանում իր անգնահատելի ու մեծ դերն է խաղացել լենինյան «Իսկրա»-ն, որի յուրաքանչյուր համարին այնպես անհամբեր սպասում էին հայ աշխատավորները։ «Անլեգալ գրականությունը խլում են միմյանց ձեռքից»—գրում է «Իսկրա»-ն Հայաստանի մասին։

---

[11] «Իսկրա», № 49։

«Իսկրա»-ի նկատմամբ աշխատավորության ունեցած բուռն հետաքրքրության մասին է իր հուշերում պատմում 1902 թվականից ՍՄԿՊ անդամ Գ. Մելիք-Երիգորյանը. «Չնայած որ մոտ 60 տարի է անցել այդ ժամանակից, սակայն լավ հիշում եմ, թե ինչպիսի հետաքրքրությամբ էին անցնում մեր պարապմունքները։ Ստ. Շահումյանը, որ ղեկավարում էր խմբակը, հաճախ իր հետ բերում էր լենինյան «Իսկրա»-ի համարները։ Բայց մենք պասսիվ ունկնդիրներ չէինք։ Մեզանից յուրաքանչյուրը պրոպագանդիստ էր, ագիտատոր, ամրացված որևէ ձեռնարկության։ Մեր զրույցները նրանց հետ (բանվորների,—Հ. Ռ.) արտակարգ աշխույժ էին անցնում այն ժամանակ, երբ ձեռքերիս «Իսկրա»-ի նոր համար էր լինում։ Ամենայն ուշադրությամբ ծայրից ծայր ընթերցվում էին նրա էջերը։ Նրանց, ովքեր ռուսերեն լավ չէին հասկանում, բացատրում էինք մայրենի լեզվով։ «Իսկրա»-ի նկատմամբ ունեցած բացառիկ հետաքրքրությունը հասկանալի էր։ Չէ՞ որ նրա էջերում աշխատանքի մարդիկ գտնում էին իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները...»[12]։

Եվ լենինյան «Իսկրա»-ի գաղափարները ժողովրդի մեջ տարածող այդպիսի ագիտատորներին հայ ժողովուրդը ոչ միայն անհամբերությամբ էր սպասում՝ այլև պաշտպանում էր նրանց ցարական ոստիկանությունից։ «Օրինակ, Ջալալօղլիում ուզում էին ձերբակալել,— գրում է «Իսկրա»-ն,— ագիտատորին, բայց ամբոխն ուժով նրան ետ խլեց և նա ազատ գնաց շարունակելու իր աշխատանքը հարևան գյուղերում»[13]։

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս խմբագրության և Անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ ունեցած կապի ամրապնդմանը, հետաքրքրվում էր, թե ինչպե՞ս է «Իսկրա»-ն հասնում ընթերցողներին, ի՞նչ կարծիքի են նրա թերթի մասին, ի՞նչ հարցեր են հուզում նրանց և ինչպիսի պարզաբանումներ են ուզում ստանալ, ո՞ր հոդվածներն են ավելի շատ դուր գալիս և այլն։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ անհրաժեշտ է «...կենդանի կապ ստեղծել արտասահմանյան խմբագրության ու տեղական աշխատողների միջև և «Իսկրա»-ն դարձնել մեր ամբողջ բանվորական շարժման լիակատար արտացոլումը թե՛ նրա ամբողջության մեջ և թե՛ նրա առանձնահատկություններում»[14]։

Անդրկովկասի բանվորական և ռևոլյուցիոն շարժումները հենց Իլյիչի ուզած «լիակատար արտացոլումն» էին գտնում «Իսկրա»-ի էջերում։ Ռուս, հայ և վրացի բանվորները թերթին գրում էին ամեն ինչի մասին և խմբագրությունից ստանում իրենց հուզող հարցերի պատասխանները։ «Իսկրա»-ի № 21-ում տպագրված հաղորդումից իմանում ենք, որ Բոգդան, Լյուգվիգ և Տիգրան Կնունյանցները որպես ռևոլյուցիոն ցույցի կազմակերպիչներ ու մասնակիցներ, իրենց ընտանիքներով ձերբակալվել են։ «Իսկրա»-ի մեկ ուրիշ համարում կարդում ենք. «Հայ ժողովրդի համբերության բաժակը լցվել է...» և նման շատ հաղորդումներ, լուրեր, ինչպես նաև հենց իրենց՝ հայ աշխատավորների գրած նամակներ, թղթակցություններ։

Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները «Իսկրա»-ի խմբագրությունից պարբերաբար ստանում էին մեծ քանակությամբ

---

[12] «Պոլիտական Հայաստան» (օրաթերթ), 24 դեկտեմբերի 1960 թ.։

[13] «Իսկրա». № 50։

[14] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 142։

գրականություն, «Իսկրա»-ի համարներ, զանազան հարցերի մասին գրված հանրամատչելի բրոշյուրներ, ինչպես նաև Վ. Ի. Լենինի մի շարք աշխատություններ։

Վ. Ի. Լենինը քաջատեղյակ լինելով Հայաստանում ծավալված ռևոլյուցիոն շարժումներին և տեսնելով այն հետաքրքրությունը, որ ցուցաբերում էր հայ ժողովուրդը դեպի մարքսիստական անլեգալ գրականությունը, հարց դրեց հայերեն լեզվով հրատարակել հանրամատչելի բրոշյուրներ, մարքսիստական-ռևոլյուցիոն գրականություն։ Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը արտասահմանից ՌՍԴԲՊ Կովկասյան Միության Կոմիտեին գրել է. «Մենք այժմ եռանդուն մտածում ենք այստեղ վրացական և հայկական գրականության հրատարակության կազմակերպման մասին։ Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնհաս ընկերներ»[15]։

Ժնևում կազմակերպված վրացերեն և հայերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականության հանձնաժողովի կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը Ստ. Շահումյանն էր։ Ստ. Շահումյանը մեծ ջանքեր էր թափում այդ կարևոր գործի իրականացման համար։ Կարճ ժամանակում Ժնևի պարտիական տպարանը ձեռք է բերում հայկական տառեր և սկսում է հրատարակել ռևոլյուցիոն թռուցիկներ, կոչեր, բրոշյուրներ, գրքեր և ուղարկում տեղերը։

Հայերեն լեզվով հրատարակվում է Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» երկը, առաջին անգամ հայերեն լեզվով լույս տեսավ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստի» լրիվ տեքստը։

Հետագայում Մ. Մանուչարյանը (Զար) իր հիշողություններում գրում է. «Հենց այժմ իմ աչքի առջև ինչպես կենդանի տեսնում եմ գրաշարների կողքին, տառարկղների վրա գլուխը կախած Ստեփանին, մի փոքրիկ տպարանում, որտեղ տպագրվում էին «Իսկրա»-ն և մեր գրքույկները»[16]։

«Իսկրա»-ի կողմից պրոպագանդվող մարքսիստական-լենինյան դաղափարների խոր ազդեցության տակ Անդրկովկասի մյուս ժողովուրդների հետ միասին հայ ժողովրդի գիտակցության մեջ էլ արմատական բեկում տեղի ունեցավ։ Մարքսիզմ-լենինիզմն սկսեց տիրապետել ավելի ու ավելի լայն մասսաների մտքերին։ «Կատարվեց այն,— գրում է Ստ. Շահումյանը,— ինչ որ պետք է կատարվեր։ Հայ ժողովուրդն էլ դուրս եկավ իր նահապետական սահմանափակ «ազգային» կյանքի շրջանակներից և կապվեց լայն, լուսավոր, քաղաքակիրթ աշխարհի հետ։ Եթե մինչ այժմ մենք ունեինք առանձին անհատներ, կամ ինտելիգենտական խմբեր, որոնք կրթվելով Ռուսաստանի կենտրոններում կամ Եվրոպայում, ճաշակելով Եվրոպական քաղաքակրթության պտուղները, գալիս էին մեզ մոտ «բարոզիչների», «լուսավորիչների» դերով, այժմ մենք ունենք ամբողջ դասակարգեր, որոնք իրենց էությամբ, իրենց սուբյեկտիվ դրությամբ, իրենց իրական կյանքով ներկայացնում են որպես արդյունք նույն սոցիալ-տնտեսական պայմանների հեղաշրջման, որը ստեղծվել է նաև մեր կյանքում»[17]։

---

[15] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 199։

[16] «Բակինս ի բարոյի», № 241, 1922։

[17] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 123։

Հայ սոցիալ-դեմոկրատներն ամենայն ուշադրությամբ հետևում էին ռևոլյուցիոն թեորիայի հարցերին և անողոք պայքարում գրա աղավաղման ամեն մի փորձի դեմ։ Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Լեհաստանի և Լիտվայի սոցիալ-դեմոկրատական թերթերից մեկում տպագրված «Կովկասի սոցիալիստական շարժումից» վերնագրով հոդվածի առթիվ Ստ. Շահումյանի նամակը «Իսկրա»-ի խմբագրությանը, որը տպագրված է թերթի 50-րդ համարում։ Հեղինակը նշում է, որ այդ հոդվածը բոլորովին սխալ է լուսաբանում Կովկասի սոցիալ-դեմոկրատիայի գործունեությունը ու կազմակերպչական սկզբունքները։ Անմիջապես նամակի հեղինակը կոնկրետ փաստերով ցույց է տալիս, որ «Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան ինչպես այժմ, այնպես էլ առաջ, մինչև Միության հիմնումը, կազմակերպչական հարցերում կանգնած է Ռուսաստանի ողջ պրոլետարիատի շահերը պաշտպանող ու ներկայացնող միասնական պարտիայի կողմը։ Կազմակերպական այն պլանը, որ անց է կացված մեզ մոտ, ոչնչով չի տարբերվում այն պլանից, որի պաշտպանը մեր գրականության մեջ հանդիսանում է «Իսկրա»-ն»[18]։

Անդրկովկասի աշխատավոր բնակչության մեջ տարածվող մարքսիստական գրականությունն ու հատկապես «Իսկրա»-ն, ուղղություն էին տալիս երկրամասի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի գործունեությանը և լուսավորում բանվորական շարժման ուղին. շարժում, որ ինչպես նշում էր լենինյան «Իսկրա»-ն, չնայած «դեռ շատ երիտասարդ է, բայց այն իր ետևում ունի պրոլետարիատի փայլուն ելույթների մի ամբողջ շարք։ Կարճ ժամանակում Կովկասի բանվորներն առաջ անցան շատ վայրերի ընկերներից, որոնք նրանցից ավելի շուտ էին ընդգրկվել շարժման մեջ»[19]։

Լենինյան «Իսկրա»-ն ու նրա հրատարակությունները անգնահատելի դեր խաղացին Հայաստանում լենինյան իսկրայական ուղղությամբ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորման, հայ աշխատավորության մեջ մարքսիզմի գաղափարների տարածման ու բոլշևիզմի դրոշի ներքո նրան համախմբելու գործում։

1902 թվականի օգոստոսին Նոր Բայազետի գավառի Ելենովկայի բնակիչ Տիմոֆեյ Ադոնևի հաստեղով ստացվում է մի ծրար, որի մեջ հայտնաբերվում են լենինյան «Իսկրա»-ի հրատարակություններ, ինչպես նաև «Զինվորի հուշագիր» բրոշյուրը։ Նույն թվականին Ելենովկայի փոստահեռագրատանը ոստիկանությանը հաջողվում է բռնել Սեմյոնովկա գյուղի բնակիչ Իվան Նեխորոշու անունով ստացված «Նարոդնի լիստոկի» 1902 թվականի № 4 և № 9, «Ռուս ջուլհակ Պյոտր Ալեքսեևիչ Ալեքսեև» և «Թե ինչպես տերտերները ժողովրդին ստրկացրին Քրիստոսի ուսմունքով» խորագրերով բրոշյուրները։ Արխիվային փաստաթղթերից երևում է, որ միայն 1903 թվականի փետրվար-մայիս ամիսներին Երևանի բնակիչ, գիմնազիայի ուսուցչուհի Նատալյա Ֆեոդորովնա Պետրովայի հաստեղով արտասահմանից ստացվել են մի շարք նամակներ, որոնց մեջ եղել են «Իսկրա»-ի տասը համարների (№ 28—37) մի շարք օրինակներ։

Լենինյան «Իսկրա»-ի առաքումը Հայաստան հատկապես ուժեղանում է ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի նախօրյակին։ «Իսկրա»-ն ստացվում էր Երևա-

[18] «Նամակ խմբագրությանը», «Իսկրա», № 50, 1903։
[19] «Իսկրա», № 44, 1903։

նում, Ջալալօղլիում (Ահարոն Իսահակյանի անունով), Ղարսում, Ալեքսանդրապոլում և այլ քաղաքներում[20]։

«Իսկրա»-ն Հայաստան էր բերվում զանազան կոնսպիրատիվ ուղիներով. արտասահմանից Անդրկովկաս եկող հուսալի ընկերների հետ, կրկնակի հատակ ունեցող ճամպրուկներով և այլ միջոցներով։ Կասկածից վեր է, որ «Իսկրա»-ի շատ ու շատ համարներ չեն բռնվել ցարական ոստիկանության կողմից և Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միջոցով հասել են աշխատավորներին ու լուսավորել նրանց գաղափարներով։ Անդրկովկասում երևան են գալիս նոր տպարաններ, վերակառուցվում են հները, ընդլայնվում է Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատների գրական հրատարակչական գործունեությունը։ Այդ ժամանակվա ընդհատակյա ակտիվ գործիչներից Տիգրան Վախտանգովը և պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանը իրենց հուշերում պատմում են, թե ինչպես 1902 թվականի աշնանը Թիֆլիսում Կամոյի ղեկավարությամբ ստեղծված ընդհատակյա տպարանում հայերեն տառերով հրատարակվում են թռուցիկներ ու կոչեր։

ՌՍԴԲՊ Անդրկովկասի կոմիտեի կոչերի, թռուցիկների ու պրոկլամացիաների հրատարակմանն ու տարածմանը Ստ. Շահումյանից, Ս. Սպանդարյանից բացի ակտիվ մասնակցում էին նաև Բ. Կնունյանցը, Կամոն, Մելիք Մելիքյանը (Դեղուշկա), Հ. Հակոբյանը, Մարտիրոս Միրաքյանը (բանվոր Շանթ), Թագուհի Մելիք-Շահնազարյանը, Արտաշես Օհանջանյանը և ուրիշներ։

Լենինյան «Իսկրա»-ի ազդեցության տակ գնալով ավելի էր ծավալվում Անդրկովկասի իսկրայականների գործունեությունը։ 1902 թվականին ՌՍԴԲՊ Բաքվի Կոմիտեն հայերեն և ռուսերեն լեզվով հրատարակեց մի քանի տասնյակ թռուցիկներ, կոչեր, բրոշյուրներ և թերթիկներ։

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս այդ մարտական թերթիկներին և գտնում էր, որ դրանք դարձել են պրոպագանդայի կարևոր միջոց։ «Տեղական սոցիալ-դեմոկրատական աշխատանքը,— գրել է Վ. Ի. Լենինը,— մեզանում արդեն բավական բարձր զարգացման է հասել։ Սոցիալ-դեմոկրատական իդեաների սերմերը Ռուսաստանում արդեն նետված են ամենուրեք. բանվորական թերթիկները—սոցիալ-դեմոկրատական գրականության այդ առաջին ձևը — արդեն ծանոթ են բոլոր ռուս բանվորներին՝ սկսած Պետերբուրգից մինչև Կրասնոյարսկ և Կովկասից մինչև Ուրալ»[21]։

Լենինյան «Իսկրա»-ի երևան գալը բարերար ազդեցություն ունեցավ Անդրկովկասում նաև պարբերական մամուլի զարգացման վրա։ Սկսեցին լույս տեսնել իսկրայական ուղղության անլեգալ թերթեր։ 1901 թվականին լույս տեսավ վրացական «Բրծոլա»-ն, 1902 թվականին հայկական «Պրոլետարիատ»-ը, 1903—1905 թթ. հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով «Պրոլետարիատի կոչը», «Պրոլետարիատիս բրծոլա», «Բորբա պրոլետարիատա» թերթերը, «Պրոլետարիատի կռվի» թերթիկը», որոնց խմբագրությունների կազմում մտնում էին հավատարիմ լենինյաններ՝ Ստ. Շահումյանը, Ի. Ստալինը, Ա. Ծուլուկիձեն, Բ. Կնունյանցը, Մ. Ցխակայան և ուրիշներ։

---

[20] Փաստերը քաղել ենք Ա. Բրանդյանի կողմից «Լենինյան ուղիով» մատեանում 1957 թ. № 10-ում հրապարակված փաստաթղթերից։

[21] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 4, էջ 268։

«Պրոլետարիատի կոիվը» թերթում են լույս տեսել Վ. Ի. Լենինի աշխատությունների առաջին հայերեն թարգմանությունները։ «Իսկրա»-ից թարգմանվել և թերթի № 2—3-ում են տպագրվել «Ինքնակալություն տատանվում է»[22] և «Ծանուցում «Կազմակերպական կոմիտե» կազմելու մասին»[23] լենինյան հոդվածները, որը պատմական մեծ իրադարձություն էր հայ աշխատավորության կյանքում։

Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատները թարգմանում ու իրենց հրատարակած պարբերականներում տպագրում էին լենինյան «Իսկրա»-ի նաև ուրիշ շատ հոդվածներ։ «Իսկրա»-ն այն անսպառ աղբյուրն էր, որտեղից սնվում, տոն ու ուղղություն էր ստանում Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի պարտիական կազմակերպությունը և նրա մամուլը։«Իսկրա»-ի շուրջը և նրա դալափարների ղեկավարությամբ,— գրել է Վ. Ի. Լենինը,— բանվորական մամուլը հսկայական չափերով աճեց նախառևոլյուցիոն տարիներում։ Անցեզուրային թերթիկների և չթույլատրված տպարանների քանակը չափազանց մեծ էր ու արագ աճում էր Ռուսաստանի բոլոր ծայրամասերում»[24]։

Պատմությունը հաստատեց լենինյան թերթի գաղափարների ու գործի ամբողջ վեհությունը, ցույց տվեց դրանց անգնահատելի նշանակությունը մեր պարտիայի գործունեության և նրա մամուլի համար։

* * *

Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների զարգացումը պայմանավորված էր լենինյան «Պայքարի միության» և «Իսկրա»-ի գոյությամբ։ Լենինյան «Իսկրա»-ն ու նրա հրատարակություններն էին, որ հասնելով հայ մարքսիստներին ու աշխատավորներին, ձև ու ուղղություն էին տալիս նրանց գործունեությանը, նրանց ռևոլյուցիոն պայքարին։ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատները ամեն հնարավոր միջոցներով աշխատում էին «Իսկրա»-ն, մարքսիստական գրականությունն ու պարտիական փաստաթղթերը հասցնել Անդրկովկաս, այդ թվում նաև Հայաստան։ «Իսկրա»-ն Հայաստան էր բերվում փոստով, ինչպես նաև զանազան կոնսպիրատիվ եղանակներով։

Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների զարգացման համար մեծ դեր խաղաց Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Ջուրաբյանի ղեկավարությամբ 1902 թվականի հոկտեմբերին հիմնված հայ սոցիալ-դեմոկրատների միությունը, որի օրգան իսկրայական ուղղության «Պրոլետարիատ» թերթի առաջին համարում տպագրված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի» մասին Վ. Ի. Լենինը հանդես եկավ «Իսկրա»-ի № 33-ում և բարձր գնահատեց հայ մարքսիստների ճիշտ դիրքորոշումը «և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը»։ Պարտիայի առաջնորդի այս բարձր գնահատականը նոր ուժ ու եռանդ է տալիս հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին ու ընդհատակյա մարքսիստական խմբակներին, որոնք «Իսկրա»-ի գոյության շրջանում լայն տարածում էին ստացել Հայաստանում։

---

[22] Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 435—442 (թարգմանված է «Իսկրա»-ի № 35-ից)։

[23] Նույն տեղում, էջ 384—389 (թարգմանված է «Իսկրա»-ի № 37-ից)։

[24] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 304։

Լենինյան «Իսկրա»-ի գաղափարների ազդեցության տակ ռևոլյուցիոն շարժումը Հայաստանում գնալով նոր, ավելի լայն մասսաներ է ներգրավում։ Խոշոր գործադուլներ եղան Շամլուղի պղնձահանքերում։ Բարձրացող ալիքը շարժման մեջ է դնում նաև գյուղացիությանը։ 1903 թվականի գարնանն ու աշնանը մի շարք գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Լոռիում և Հայաստանի այլ վայրերում։

1903 թվականի հունիսի 12-ին ցարը ստորագրում է հայկական եկեղեցական ունեցվածքը կառավարության տնօրինությանը հանձնելու մասին թալանչիական օրենքը։ Այդ առթիվ Ռ. Կնունյանցը «Իսկրա»-ում հանդես է գալիս «Նոր կողոպուտ» հոդվածով։ «Իսկրա»-ն հայ ժողովրդին բացատրում էր, որ այդ օրենքը կոպիտ ոտնձգություն է ազգային կյանքի ինքնուրույնության նույնիսկ ամենավերջին մնացորդների դեմ և կոչ էր անում հայ ժողովրդին ոտքի ելնել ու հակահարված տալ ցարական կառավարության այդ ոտնձգությանը։

Հայաստանում, ինչպես նաև Անդրկովկասի հայաբնակ վայրերում տեղի են ունենում հակացարական միտինգներ, զորքի հետ արյունալի ընդհարումներ։ «Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի մարտական տրամադրություն է տիրում Կովկասի հայ բնակչության մեջ»— գրում է լենինյան «Իսկրա»-ն։

Հայ սոցիալ-դեմոկրատները, ղեկավարվելով «Իսկրա»-ի ցուցումներով, աշխատում էին ճիշտ ուղղություն տալ ցարիզմի դեմ ուղղված աշխատավորական այդ ելույթներին։ «Իսկրա»-ն այդ առթիվ նշում է, որ հայ սոցիալ-դեմոկրատները միանգամայն ճիշտ կողմնորոշվեցին։

Լենինյան «Իսկրա»-ի բարերար ազդեցության տակ գնալով ավելի էր մեծանում ՌՍԴԲՊ Անդրկովկասի կոմիտեների գործունեությունը։ Լայն ծավալ է ստանում նրանց ընդհատակյա գրական-հրատարակչական գործունեությունը։ Ստեղծվում են նոր տպարաններ, ընդլայնվում են հները։ «Իսկրա»-ն բազմիցս նշել է հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն լեզուներով հրատարակված մոբիլիզացնող կոչերի, թռուցիկների մասին։

Լենինյան «Իսկրա»-ի երևան գալը բարերար ազդեցություն ունեցավ Անդրկովկասի նաև պարբերական մամուլի զարգացման վրա։ Սկսեցին լույս տեսնել իսկրայական ուղղության անլեգալ թերթեր, որոնք հաճախ թարգմանում ու իրենց էջերում տպագրում էին «Իսկրա»-ի շատ հոդվածներ։

Լենինյան «Իսկրա»-ն այն անսպառ աղբյուրն էր, որտեղից սնվում, տոն ու ուղղություն էր ստանում Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի պարտիական կազմակերպությունը և նրա մամուլը։

«Իսկրա»-ի կողմից պրոպագանդվող մարքսիստական-լենինյան գաղափարների խոր ազդեցության տակ, Անդրկովկասի մյուս ժողովուրդների հետ միասին հայ ժողովրդի գիտակցության մեջ էլ արմատական բեկում տեղի ունեցավ։ Լենինյան «Իսկրա»-ի գաղափարներն սկսեցին տիրապետել ավելի ու ավելի լայն մասսաների մտքերին։

Լենինյան «Իսկրա»-ի վառած կայծից մի հզոր բոց բռնկվեց նաև Հայաստանում։